

սին, որ նրա թղթակցը ունեցել է Միլիտայի հետ: Եւ դարձեալ նոյն միտման հազար ու մի անգամ կրկնված է արդէն վաղուց ամենքին ձանձրացրած պատմութիւնները, թէ ամեն ինչ անում են հրէաները, թէ Ֆրանսիան իր 40 միլիոն ազգաբնակչութեամբ ստրկացել է մի բուռն հրէա-նեւրի ձեռքին: Միծաղելի է, բայց պէտք է կրկնել, անվերջ կրկնել, մինչև որ լուսինը կը հասկանայ, թէ այս, հրէան արժանի չէ իր լոյս-սին: Եւ խեղճ հասարակութիւն: Նա պիտի այսպիսի անմաքրութիւններից հոգեւոր սնունդ ստանայ...

Դուռնայի ձայնաւորը իրաւունք ունի ամառը հեռանալ քաղաքից: Այս «երեւելի» հարցը մի փոքրիկ բանականութիւն է բաց արել «НОВОЕ ОБЩЕ» և «ВАСИЛИ» լրագիրներին մէջ: Վերջինը, ի հարկէ, ասում է, որ ձայնաւորը ամառը արձակուրդ չունի, բայց առաջինը հակառակ կարծիքի է: Այս բանականութիւնը մէջ հետաքրքրողը այնքան բուն հարցը չէ, որքան այն, որ խօսքը միայն Քիֆ-լիսի դուռնայի ձայնաւորներին մասին է: Որ ար-ձակուրդը տեղի հետ է կապված, այդ ցոյց է տալիս հետեւեալ հանգամանքը: Արդէն մի քանի շաբաթ է, Բագուի «ВАСИЛИ» լրագիրը գանգատ-վում է, որ Բագուի քաղաքային ուսարկալում միայն մի անգամ է մնացել. մնացածները ար-ձակուրդ են ուտացել և հեռացել, այնպէս որ ուսարկայի մէջ կատարեալ դատարկութիւն է տիրում. գնացել են և շատ ուրիշ ծառայողներ: Ինչպէս տեսնում ենք, այստեղ արդէն դուռնայի չէ բացակայ, այլ ուսարկայի, որ այնքան հար-կուրդ է քաղաքին, առանց որի քաղաքային գործակալութիւնը չէ կարող կանոնաւոր, ա-նարգել կերպով առաջ գնալ: Քիֆլիսի ձայնա-ւորների քաղաքայինութեան դէմ են, ի նկատ առ-նելով քաղաքի շահերը: Եստ լաւ: Բայց միթէ Բագու քաղաքի շահերի տեսակէտից շատ օղ-տակար է, որ նրա ուսարկային ամբողջ ամառ-վայ ընթացքում քաղաքայ լինի: Եւ սակայն այդ փաստի աւելթով ոչ թէ որ և է դժգոհու-թիւն չը յայտնեց «ВАСИЛИ» լրագիրը, այլ, որ-քան յիշում ենք, նա մինչև անգամ չար-ձանագրեց նոյն իսկ փաստը: Ի՞նչ կը լինէր, եթէ Բագուի այդ քաղաքի դէպքը Քիֆլիսում տեղի ունենար: Ինչպէս երևում է, կայ և աշ-խարհագրական արդարադատութիւն:

Վաղուց է որ Ռուսաստանի ամբողջ մասերը գանգատվում է ռուսաց հեռագրական գործակա-լութեան դէմ: Ամեն օր նորանոր փաստեր են հրա-տարակվում, որոնք ցոյց են տալիս, թէ ինչպէս այդ գործակալութիւնը մեծ մասամբ բեկկամեց- է անում իր անդամների մասին: Դժգոհութիւնը գաղթականներին է հասել. գործակալութեան անբարեխղճութիւնը միանգամայն ապշեցնող է: Եւ այդպէս վարվում են մամուլի գործիչները, որոնք վերցրել են այդ գործակալութիւնը: Վեր-ջին ժամանակներս այդ միասնաբու ըողջների դէմ դուրս է եկել «НОВОСТИ» լրագիրը, որ ուղում է ապացուցանել, թէ գործակալութիւնը մի ձիւնա-փայլ, անմեղ զանգուկ է: Այդպիսի մի դեր ա-մենից քիչ «НОВОСТИ»-ին է սաղ գալիս, չը նա-յած որ նրա խմբագիրն էլ գործակալութեան գլխաւորներից մէկն է: Զօ չէ կարելի ասել, թէ Ռուսաստանի բոլոր կողմերում հրատարակվող լրագիրներն են սխալված. հօ չէ կարելի են-լրագիր թէ հեռագիրների համար անագին վարձ վճարող խմբագրութիւնները չեն հասկանում, թէ ինչ տեսակ հեռագիրներ են հարկաւոր ի-րանց ընթերցողներին: Կովկասեան խմբագրու-թիւնները շատ անգամ են տեսել այսպիսի ապ-շեցնող փաստեր. Կովկասի վերաբերվող կարե-ւոր լուրերը չեն հաղորդվում հեռագրով, իսկ դրանց փոխարէն առատ տեղեկութիւններ են գալիս ինչ որ դերասանուհու ներկայացումների մասին կամ թէ հաղորդվում է, թէ Սազաւտան հարբուկ ստացաւ: Եւ այն պաշտպանութիւնը, որ այժմ ցոյց է տալիս «НОВОСТИ»-ն, միայն այն է ապացուցանում, որ սինդիկատի շահերը պիտի բռնելը մեր ներթափաշտ ժամանակի տխուր երեւոյթներից մէկն է...

ՆԱՄԱԿ ԱԼԷԳՍԱՆԻՐՈՒԹԻՅ

Յուլիսի 5-ին

Վերակի, յուլիսի 4-ին, տեղիս նշանաւոր ս. Աստուածածին եկեղեցում նշանակված էր ժո-ղով, նոյն եկեղեցում երէցփոխի ընտրութեան համար: Ներկայ լինելով այդ տարօրինակ ժո-ղովին, մենք շատ տխուր մտքերով հեռացանք եկեղեցուց: Այս, ցաւալի է, շատ ցաւալի է այն հանգամանքը, որ մենք ամեն անգամ հետաքր-քրվելով մեր եկեղեցական գործերով, իսկոյն նկատում ենք մի չարաբանտիկ հարցի գոյու-թիւն, որը մինչև այսօր չըստանալով ոչ մի օ-

րինաւոր լուծում, սպառնում է մեր ներքին կեանքի խաղաղութեանն ու անդորրութեանը: Մեր խօսքը երէցփոխութեան հարցի մասին է, որը իր պատճառած անխտրժութիւններով դու-րս է այնքան ինչ է, որքան ինքն եկեղեցին:

Տարիներից հետէ հայոց պարբերական մամու-լի լաւագոյն և ազատամիտ մասը խիստ ըողը ու տրտունջ է բարձրացրել այն ամեն անար-դարութիւնների դէմ, որոնք կատարվել են ե-կեղեցու բարեգործութեան և նրա շահերին «նուրբով» մարդկանց ձեռքով: Բայց թէ իրօք ինչքն են կատարվել այդ երէցփոխ անուանված հրէչների ձեռքով, քանի-քանի անգամ նրանք ի չարն են գործադրել իրանց յանձնված իրա-ւունքները, այդ մասին մենք, բարեազդաբար, շատ քիչ բան գիտենք: Սակայն փաստը այս է, որ ամեն տեղում երբ ժողովուրդը հետաքրքրվել է իր երէցփոխների հաշիւներով, գտել է զեղ-ծուկներ և խարդախութիւններ: Բացառութիւն-ները խիստ սակաւ են:

Գալով մեր այժմեան երէցփոխ Ա. Տիգրա-նեանին, որը արդէն լրացրել է իր պաշտօնա-վարութեան ժամանակամիջոցը, մենք առ այժմ այսքանը կասենք, որ մեզ պակասում են օրի-նաւոր փաստեր և ճիշդ տեղեկութիւններ նրան խնկարկելու կամ վատաբանելու համար, բայց մի բան, որ մենք այդ օրը նկատեցինք, այդ նրա բռնած դիրքն էր: Մենք պարզ նկատե-ցինք, որ պ. երէցփոխը անասման փափագ ու-նի վերջնորդվելու, մի ցանկութիւն, որ էական-նապէս վերցնելով կարող է ապշեցնել շատերին և տեղիք տալ անյարժար ենթադրութիւններ: Ժողովի ժամանակ պ. երէցփոխը մի այնպիսի ողորմելի կերպարանք էր ստացել, որ կարծես վիճաբանող կողմերին աղաչում էր՝ «պարոններ, խնդրում եմ նորից վերջնորդեցէ ինձ, չէ որ ես ազնիւ երէցփոխի հռչակ ունեմ»:

Նրա հաշիւների արդար, լուրջ և շուտափոյթ ընտրութիւնը թողնելով պ. պ. Յ. Մատինեանին, Մ. Ջատիկեանին և Յ. Կորանեանին, որոնք նոյն ժողովին ընտրվեցին հաշիւետեսներ, մենք, սակայն, գիտենք, որ երէցփոխ պ. Տիգրանեան կարող է ցանկալ իր պաշտօնի մէջ մնալու, ո-րովհետեւ նախկին երէցփոխ Սրապեանին հաշիւ-ները ընտրող հաշիւետեսները, միաժամանակ աշ-քի անցկացնելով նրա մատենաները, տողերիս գրողի ներկայութեամբ առաջարկեցին պ. Ա. Տիգրանեանին տուրս վճարել այն կանխիկ հա-կարների համար, որոնք տարիներով մնում են նրա մօտ: Պ. երէցփոխը պարզ է ի պարզ յայտ-նեց, որ տուրս վճարել այդ փողերին, մինչև իսկ ամենահնչիւն տուրս, նա անարդար է զեռ-նում, որովհետեւ եկեղեցուն իր մատուցած ծա-ռայութիւնների վարձը այդ փողի տուրսից ա-ւել արժէ:

Ժողովականները, որոնցից շատերը կանխա-պէս պատրաստված մարդիկ էին, իրանց պա-հում էին շատ անպատշաճ կերպով: Աղոտկներ և աղաղակներ մի քառս էր և և ոչ ժողով, ո-րոնց մէջ խառնում էին և մի քանի դիրք ունե-ցող մարդկանց ձայները: Եւ մենք զարմանում ենք, թէ ինչի նախադասող Միխայիլ վարդապե-տը պատշաճաւոր կարգադրութեան չէր հրաւի-րում և չէր ստիպում ժողովականներին արժա-նաւոր կերպով պահել իրանց Աստուծո տա-նորում:

Ժողովականները, հաշիւետեսների ընտրու-թիւնից յետոյ, նորից յիշեցին նախկին երէցփոխ Սրապեանի հաշիւները. յիշեցին նախկին հաշիւե-տեսների թուղթիւնը, որ այնքան աղմուկե-րից և իրաբանցուկից յետոյ ոչ մի դրական օ-գուտ չը տուին:

Վերջացնելով մեր խօսքը, մեր չեմ ցանկու-թիւնն ենք յայտնում, որ պ. պ. հաշիւետեսները չը նմանէին իրանցից առաջ եղածներին, ըն-նէին փաստերը մանրակրկիտ կերպով, շուտով վերջացնէին իրանց վրա դրած գործի ընտու-թիւնը, որից յետոյ միայն հնար կը լինի նոր երէցփոխի ընտրութիւնը:

ՆԱՄԱԿ ԶԻՐՈՒԹԻՅ

Յուլիսի 5-ին

Զիրուխու գիւղը գտնվում է Նոր-Բայազետի գաւառում, Սևանի լճից մի քանի վերստ հեռա-ւորութեամբ: Այդ գիւղի բնակիչները 1828 թվականին Հիւսիս-Բայազետից գաղթած են այս-տեղ: Զիրուխուն այժմ ունի 260 տուն և իւրա-քանչիւր տուն վրա գալիս է միջին թուով 3 դե-սիտային հող, որ գիւղացիք վարում են ու ցա-նում ամբողջութեամբ, առանց մտածելու՝ թէ հողը ամեն տարի վարվելով ու ցանվելով, այն-քան կարող է մաշվել, որ անձրային եղանա-կում էլ քիչ արդիւնք կարելի է նրանից սպասել: Բացի սրանից, չիրուխուցիները գործ են անում ամենահին երկրագործական գործիքներ. ինչ որ

նրանք գործածում են եղել 31 տարի սրանից առաջ, այժմ էլ նոյն գործիքներն են բանեց-նում: Նրանց ունեցած հողն էլ քարոտ լինելով, հողի վարելի ու պարարտացնելն էլ շատ դժ-ւար է: Հանապարհօրէնքին մի բան է զար-մացում այս գիւղում—տների չինումը: Երբ-ձառի ճարտարապետութիւնը: Սրանք բոլորն էլ՝ թէ և քարաշէն են, բայց լոկ ցեխով շինված. կրի հետքն անգամ չէ երևում: Տները մեծ մա-սամբ զետեւափոր են: Սրան է, որ այստեղի ժողովուրդը իր անընդունակութիւններով առա-ջին տեղն է բռնում՝ համեմատելով նրան միւս գիւղերի ժողովուրդների հետ:

Զիրուխուց մի քանի վերստ հեռու գտնվում է մալականների Սեմեօնովկա գիւղը, որը ան-համեմատ աւելի բարեկարգված դրութեան մէջ է, քան թէ Զիրուխուն: Վերջինի մէջ չը տեսայ և ոչ մի մարդ քիչ թէ շատ վայելուչ կերպով հագնված. բոլորն էլ ցնցոտիների մէջ են թաղ-ված... Հողի պակասութիւնը և անբերրութիւ-նը ստիպում է այստեղի ժողովուրդներին գիւմը հեռաւոր քաղաքներ և թողնել երկրագործու-թիւնը: Սրանք կարող են իրանց ներթափա-ղութիւնը ուղղել, եթէ իրանց ուշադրութիւնը դարձնեն գլխաւորապէս անասնապահու-թեան վրա, որովհետեւ Զիրուխուց ոչ հեռու գտնվում են շատ սարեր, որոնց վրա կարելի է արածացնել մեծ քանակութեամբ ոչխարներ և ուրիշ կենդանիներ: Ոչ պակաս կարելի է այս-տեղ ծաղիկեցնել և մեղուապահութիւնը, որով-հետեւ դանազան տեսակ ծաղկաբեր բուսու-թիւնը չըլքակայելով շատ կան: Իսկ թէ կաթ-նատեսութիւնը կարող է այստեղ մեծ ծաւա-լ ստանալ, դրանում ես անտարակոյս եմ. բաւա-կան է, որ մարդ այդ բանի համար հաստա-տուն կամը ունենայ:

Բայց այս ամենը անել տալու համար չի-բուխուցուն ուղեցոյցի հարկաւոր: Եւ միթէ այս բանի մէջ ուղեցոյց չէր կարող լինել Սեա-նի վանքի միաբանութիւնը: Դժբաղաբար, Սևանի վանքի միաբանութիւնը իր սեփական ծամաբարեք և Գոմաձոր գիւղերի հայ բնա-կիչների դրութիւնն էլ չէ բարւոքել: Նոյն չի-նական անշարժութիւնն է տիրում Ծամաբարեք և Գոմաձոր գիւղերում, որոնք սահմանակից են Զիրուխուին, ինչպիսին նկատեցինք վերջինի մէջ: Սրանք էլ ուսումնարաններ երբեք չեն ու-նեցել. մինչդեռ սրանց կից մալականների գիւ-ղը՝ Նիկոսովկա անունով, թէ հողագործութեան կողմից և թէ տնտեսապէս աւելի առաջադի-ւած է, քան թէ վերել յիշված երեք հայաբնակ գիւղերը:

Վանքապատկան Ծամաբարեք գիւղում, որը գտնվում է Սևանի լճի ափում, չը տեսայ ոչ մի հատ վայելուչ կերպով շինված տուն, այլ բոլորն էլ զետեւափոր հաւաքոյն են: Դը-րանց անասունները կարծես թէ կատուի ցե-ղիցն են. երևում է, որ գիւղացիք ամենին հասկացողութիւն չունեն կենդանապահութեան վրա, և դրա համար այդ գիւղում կենդանիների ցանքերը անպակաս են: Այժմ էլ Ծամաբարեքում ժանախտը շատ է կտորում կենդանիներին:

Այս բոլոր տխուր փաստերը շուտով կը փոխվեն, եթէ նշանակվէր Սևանի վան-քի վանահայր մի ամանաղէտ գիւղապետ-տեւ վարդապետ, որի պարտաւորութիւնը լի-նէր միշտ այցելել վանքին մօտակայ բոլոր հայաբնակ գիւղերը և սովորեցնել գիւղացի-ներին գիւղատնտեսութեան կարգը և կանօնը: Նա թող սովորեցնէ գիւղացուն օգտվել իր ունեցած հողի յատկութիւններից: Զիրուխում, Ծամաբարեքում և Գոմաձորում քաղ ու կրի պակաս չեն, սակայն նրանց մէջ չը կայ և ոչ մի հատ քարով ու կրով շինված տուն... Սա չինական անշարժութիւնից էլ աւելի վատ չէ...

Ս. Բան. Սամուէլեան

ՆԵՐՔԻՆԻ ԼՈՒՐԵՐ

Մենք յայտնել էինք «Մշակի» մէջ, որ երկ-րագործութեան միջնարդը Ներքից պէտք է այս ամառվայ ընթացքում այցելի Կովկաս: Այժմ կարող ենք յայտնել, որ միջնարդը ճանապարհ է ընկել Պետերբուրգից և ուղևորվել Տաթև: Այնտեղից միջնարդը պէտք է գնայ դէպի Սե-մովի ափում գտնվող Սօչի աւանը և ապա այ-ցելի Բաթումի շրջակայքում գտնվող Թէյի բու-սարանները: Այնուհետև միջնարդը կուղևորվի դէպի հիւսիսային Կովկասի հանքային ջրերը, ծանօթանալու ջրերի կառավարութեան գործի ներկայ վիճակի հետ և առաջ տանելու նրանց բարեկարգութեան ծրագրերը, որ անընդհատ մը-չակութեան մէջ է գտնվում մի քանի տարինե-րից ի վեր:

Մենք յայտնել էինք, որ Պարիզում հրատա-

րակվում է հնախօսական, պատմական լեզուա-բանական մի պարբերական հանդէս «Բանասէր» անունով, որ լոյս է տեսնում տետրալինքով տա-րին չորս անգամ: Հանդէսը տպագրվում է վիճա-տիպով է ժամութեան համար: Մեզ հաղորդում են, որ հանդէսի խմբագիր Կ. Բասմաջեան, նկատելով վիճագրութեամբ լոյս ընծայելու անյարժարու-թիւնը, մտադիր է ձեռք բերել մասնաւոր փոք-րիկ տպարան և յանձնել իր հանդէսը տպագրա-կան մամուլին: Բասմաջեան յոյս ունի, որ կը գտնվեն հայ հարուստներից անձինք, որոնք աչքի առաջ ունենալով հնախօսական մի հան-դէսի հրատարակութեան հետ կապված զոհո-ղութիւնները, կօգնեն նրան, թեթևացնելով նրա ծախքերը տպագրական մամուլ և տառեր ձեռք բերելու գործում:

Սենատը քաղաքից է, որ քաղաքապետի պաշ-տօնակատարը չէ կարող քաղաքապետի ռոնիկը ստանալ, եթէ դրա մասին չէ կայացել առան-ձին որոշում դուռնայի կողմից: Մի և նոյն ժա-մանակ քաղաքապետի պաշտօնակատարը կարող է ստանալ ռոնիկ միայն այն դէպքում, երբ քաղաքապետը բոլորովին հրաժարվում է իր պաշտօնակատարութիւնից:

Արտասահմանեան թերթերը նկարագրում են Նաւթաշորեր փոքրիկ նոր կատարելագործ-ված եղանակը, որ կատարվում է երկտրակա-նութեան շնորհիւ: Այդ եղանակով սկսել են հորեր փորել Բուսինայում և հասել են այնպիսի արդիւնաւէտ հետեւանքների, որ Անտիկրային հաւթային ընկերութիւնը որոշել է ձեռք բերել 18 երկտրական փորիչներ և բոլորն էլ գործ դը-նել ներկայ 1899 թվ. ընթացքում:

«ВАСИЛИ» լրագիրը հաղորդում է, որ Ֆրան-սիական մի ընկերութեան ներկայացուցիչ խն-դրամատոյց է եղել երկրագործութեան միջնա-տրութեան առաջ, որպէս զի յիշեալ ընկե-րութեանը բացառիկ արտօնութիւն տրվի չա-հագործելու Դադստանի նահանգում գտնվող վիճագրական քարի հանքերը:

Վերջերս կերօսինի շահագործութիւնը Բուսի-նայում մեծ չափեր է ընդունել: Նորերս,— ինչպէս հաղորդում է Միւնխէնի «Allg. Zeitung» լրագիրը,— Բուսիստան եկաւ անգլիական մի խո-շոր ընկերութեան ներկայացուցիչը Ռուսաստա-նում՝ նախաբեր հողաբաժիններ գնելու համար Բուսինայում: Մի քանի օր նա չըլքեց բոլոր նախաբեր տեղերը և արդէն գնեց ու կապալով վերցրեց շատ հողաբաժիններ Կամպեում և Բուսիստանում, ուր կարծվում է թէ նախաբ-երի արդիւնք կան: Մի մասնագէտ այսպէս էր բացատրում վերոյիշեալ լրագրի ներկայացուց-չին օտար կապիտալները Բուսինայի նախաբ-երի հողերի մէջ գնելու ձգտումը: Ռուսաց կա-ռավարութիւնը իր նորերս հրատարակած ար-դիւնաբերական օրէնքով սահման դրեց կէքօսի-նային դանազան ընկերութիւնների աւագին չա-հերին, և այդ պատճառով վերջինները իրանց հայեացքները ուղղեցին Բուսինայի վրա: Սու-դանը նուաճելու օրից, անգլիական ընկերու-թիւնները սկսեցին Բուսինայի վրա նայել, որ-պէս գանձի վրա, որովհետեւ Բուսինայի բոլոր նախաբեր հողերից մօտ է Նիկիտոսին և Սու-դանին: Այդ է պատճառը, որ անգլիացիները աշխատում են իրանց դրամագրութիւնները գոր-ծադրել Բուսինայի նախաբերի ձեռնարկու-թիւնների մէջ: Բացի անգլիական ընկերու-թիւններից դէպի Բուսինայի կերօսինը ձեռք են մեկնում էլի մէկ ունդարական և մէկ բէլ-գիական ընկերութիւն:

ԵՐԵՎԱՆԻՑ Բեզ գրում են. «Այս օրերս Երե-ւանի փոխանորդ Ներսէս Եպիսկոպոսը քա-նայ ձեռնագրեց 11 գիւղացի տիրացունքին: Զեռնագրված տիրացունքներից մէկը Ներսիսեան դպրոցի երկրորդ դասարանից է, երկուրդ ձեռա-բանի առաջին և երկրորդ դասարաններից, իսկ մնացածները գիւղական միջնաւան դպրոցում են աւարտել իրանց ուսումը...»

ԿՕՁՐՈՒՑ Բեզ հաղորդում են. «Վերակի, յուլի-սի 11-ին, այստեղի հայոց Ս. Կարապետ եկե-ղեցում, պատարագից յետոյ, տեղի ունեցաւ ե-րէցփոխի ընտրութիւն: Հրաւիրված էին ընտ-րութեան ամբարանից եկած պարոնները: Ընտր-վեց Նիկողայոս Նարեմանյան»:

ՇՈՒՇՈՒՑ Բեզ գրում են. «Երեւկ, ամսիս 7-ին, հայոց թեմական դպրոցի հոգաբարձական նիս-տում, վճռել են դպրոցի համար նոր տեսուչ հրաւիրել, որովհետեւ Տիրայր վարդապետի պաշ-տօն վարելու ժամանակամիջոց լրացել է և ըն-

դուրսված կանոնով պաշտօնի չէ կալված դեռ։ Նոյն ժողովում որոշել են արձակել աստուածաբան Արշակ Տէր-Միքէլեանին, որին 6 տարի առաջ Գեորգեան ձեռնարանից արձակել էին։

ԱԼԷԿՍԱՆԴՐՈՊՈՒՅՑ մեզ գրում են. «Ամսից աւելի է, որ անձրեկ երես չենք տեսնում։ Գաւառի ցանքերի մեծ մասը զգալի վնասներ կրեց։ Հաջորդ օր օրի վրա թանգանում են։ Դրութիւններս կրկնապատկան է։»

ԿՕՁՕՐԻՑ մեզ հաղորդում են. «Անցեալ 1898 թ.ի ամառը մանուկների խնամատար ընկերութեան անդամները հիմնեցին Կօջորում մանկական խաղեր, որոնք տեղի էին ունենում շաբաթը երկու անգամ։ Այս ամառ նոյն խաղերը կազմակերպւում են աւելի մեծ և ընդարձակ դիրքով։ Առաջին խաղը կայացաւ կիրակի, յուլիսի 11-ին։ Այնուհետև շաբաթը երեք անգամ պէտք է տեղի ունենան այդ խաղերը։ Երկրորդը են մանուկների համար դասիվայր, կարուսէլ և տափարակների կրօնէս, սերսո և ուրիշ խաղերի համար։ Տեղական զինուորական օրկեստրը նուազում է երաժշտութիւն։ Առաջին օրը գրաւել էր թէ մանուկների և թէ հասակաւորների մեծ բազմութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻԱ

Այս օրերս Théâtre de la République-ում, Պարիզում, տեղի ունեցաւ նացիօնալիստների ժողովը, որին ներկայ էին մօտ 2,500 մարդիկ։ Ներկայ էին հայրենասէրներ լիզայի ընդհանուր շտաբի բոլոր ներկայացուցիչները։ Դէրուէլը մի երկուր ճառ արտասանեց, որը, սովորականին պէս, բաղկացած էր ճշմարիտ փրօքներից և որը ծածկւում էր հասարակութեան բուռն ծափահարութիւններով։ Ի միջի այլոց՝ Դէրուէլը ասաց.

«Կեցցէ զօրքը—նշանակում է՝ թող կորէի աւրաւը, կորչեն գողերը, կորչեն անապատները։ Դուք դիտե՛ք, որ ես հակառակ չեմ հանրապետութեանը, այլ դէմ եմ միայն այժմեան հանրապետութեանը։ Հասարակութեան մի մասը Դէրուէլի այդ խօսքերին արձագանք տուեց՝ «Նիւստան պալատը» աղաղակներով։

Դէրուէլը շարունակեց. «Եթէ երբ և իցէ ես կընկնեմ Սիւսեան պալատը, դա միմիայն նրա համար կը լինի, որ դուրս անեմ այնտեղից նըրանց, որոնք այս քաղաքի այնտեղ են գտնւում, և ոչ թէ նրա համար, որ ես այնտեղ մնամ։ (Բուռն ծափահարութիւններ)։ Կալէէկ և Գալիֆէ հրամայեցին հաղորդել ինձ, որ եթէ ես չափաւանջ սպառնական ըստիմ եմ, ես կը ձերբակալվեմ։ Ես նրանց երեսին եմ շարունակում իմ ատելութիւնը և իմ արհամարհանքը։ Նրանք կամենում են կործանել Փրանսիան։ Մենք պարտաւոր ենք փրկել նրան։

Այդ տեսակ էր Դէրուէլի ամբողջ ճառը, որ տեւեց մօտ մէկ ժամ։ Երբ ժողովը փակվեց, մանակցողները ցրվեցին՝ Կեցցէ զօրքը, կեցցէ Դէրուէլը» աղաղակներով։ Փողոցի վրա նրանց դիմաւորեցին ոստիկանական մեծ զօրաբաժիններ, որոնց առաջնորդում էր ինքն ոստիկանութեան պրէֆէկտ Լէպլին։ Ոստիկանութիւնը ստիպեց ցրվել ցոյց անողներին։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, 3 յուլիսի

Լինչի դատաւարը գործ է դրվում ոչ միայն Ամերիկայում, այլ և արևելեան ազգերի մէջ, թէև մի փոքր ուրիշ ըզնակով։ Մի բանի օր առաջ 4000 հոգեւ ընդհանրապէս տղամարդկանց և կանանց մի մեծ ամբոյն յարձակումն արժեց Թէհրանի բարձրաստիճան պաշտօնեաներից մէկի—Գալիֆէ-Պալլայի տան վրա, քանից, աւերեց և կողոպտեց ամեն բան, ինչ որ ձեռքն ընկաւ։ Տանտէրը դիմեց ոստիկանութեան. ոստիկանութիւնը, տեսնելով որ ինքն անզօր է զօգել կատաղած ամբոյնը, դիմեց զինուորական վարչութեան. զօրք եկաւ, և երբ յորդորները ոչ մի օգուտ չունեցան, հրաման եկաւ զօրքին պարպել հրացանները, բայց զինուորները շանասցին այդ հրամանին, ասելով. «Մենք չենք կարող ըստ պանել մեր եղբայրներին. շարիաթն արգելում է այդ։ Ս. այդպէս, ամբոյն անարգել կողոպտեց, աւերեց, քանդեց Գալիֆէ-Պալլայի տունը, մինչև ստացաւ իր ցանկացածը, այն է վերահաստատեց իր ոտնակոխ եղած իրաւունքը։

Պարսկաստանում ամեն անգամ, երբ ժողովուրդը կրում է որ և է հարստահարութիւն, ենթակայ է որ և է կեղծքման այս և այն պաշտօնեայի կողմից կամ նահանգապետի կողմից և

չէ կարողանում արդարութիւն գտնել Գալիֆէ կամ միւստորներէից, յուսահատված, ինքն իր ձեռքով է կատարում իր դատաւարանը և վերահաստատում իր ոտնակոխ եղած իրաւունքը։ Այդպիսի դէպքերում նա ոչ մի պատժի չէ ենթարկւում։ Այդպէս վարվեց ամբոյն անցեալ տարի Փարսիզում, աւերելով, քանդելով, կողոպտելով Նիզամ-Ուլամայի տունը և զրիւ տաւրով նրա ցորենի ամբարները. այժմ այդպէս վարվեց ամբոյնը և Թէհրանում Գալիֆէ-Պալլայի վերաբերմամբ, որ զրկել էր մի ամբողջ թաղ ջրից, այնպէս որ այդ թաղի հազարաւոր բնակիչները այս սարսափելի տաք օրերում ուղղակի տուրքով, այրվում էին ծարաւից։ Ներկայ Սաղր-ազամի եղբայր Ամին-Մուլլը, որ վարձակաւեց երկու ամիս առաջ, կտակել է մի մեծ դանաթ (աղբիւր, ջրանցք) ջուր Թէհրանի սակաւաջուր թաղերից մէկին, իբրև վագֆ. դա մի մեծ բարեգործութիւն էր ամբողջ թաղի համար, ի նկատի ունենալով, որ Թէհրանում ջուրը, առհասարակ, ոսկւ դին ունի։ Այդ ջուրն անցնում էր Գալիֆէ-Պալլայի տան միջով, և ահա վերջինս, օգուտ քաղելով այդ հանդամանքից, սեփականացրեց իրան ամբողջ ջուրը և թոյլ չը տուեց, որ թաղեցիներն օգտվեն։ Թաղի բնակիչները քանիցս զանգարուեցին Գալիֆէ, քաղաքապետին, բայց անօգուտ։ Յուսահատ, անճարացած, նըրանք խմբովին թափվեցին Գալիֆէ-Պալլայի տան վրա և պատմեցին նրան, քանդելով նրա ջրամբարները, ու հարթելով ջրի համար ճանապարհ դէպի իրանց թաղը։ Ամբողջ զապալու համար կանչված զօրքն ևս իր կողմից օգնեց այդ ամբոյնին։ Գալիֆէ-Պալլայն թէև զանգատուեց Գալիֆէ, բայց վերջինս հրամայեց պատժել ամբոյնը, մանաւանդ որ սրա կէսը բաղկացած էր կանանցից։

«Մշակի» մէջ արտատպած և եւրօպական լրագրիչները բաղված լուրերը Գալիֆէ-Պալլային մասին միանգամայն անհիմն են։ Գալիֆէ-Պալլայն առողջ է, որ ամեն օր փոքր զուարճական ճանապարհորդութիւններ է կատարում, իսկ վաղը ամբողջ արքունիքով գնում է որսի Մադան-դարանի անտառները։

Բուշիրում ժամադարը դեռ չէ դադարել։

Հ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսում այժմ աշխատում են ինչպէս և իցէ միջոցներ գտնել՝ կրեւորացի գաղթականներին Թուրքիայում բնակեցնելու համար, և յանձնաժողով նշանակելով եկամտի նոր աղբիւրներ գտնելու նպատակով։ Այդ յանձնաժողովը, ի միջի այլոց, առաջարկեց հարկ առնել այն բոլոր անձերից, որոնք պաշտօններ և շքանշաններ կը ստանան։ Ս. որպէս զի աւելի արդիւնաւոր դարձնեն եկամտի այդ աղբիւրը, առաւորութեամբ պարգևներ են շնորհվում, մանաւանդ բարձր աստիճաններ և շքանշաններ, որովհետև զրանց վրա ամենից շատ հարկ է դրված։

—Հայ-կաթօլիկները մէջ ներկայումս մեծ յուզմունք է տիրում հանդուցեալ Աղաբեանի տեղ նոր պատրիարքի առաջիկայ ընտրութեան առիթով։ Ինչ թէ տաք թեկնածուներից ամենից շատ շանսեր ունեն ընտրվելու՝ Թէրզեան, Աղաբեան արքեպիսկոպոսը, պատրիարքի տեղապահ Արքիարեան, և հայ-կաթօլիկների պատուիրակը Հռոմում, Կիւպէլեան։ Թէրզեան հայ-կաթօլիկների ընդհանուր սէրն է վայելում և, երևի, պատրիարք կընտրվի, եթէ Արքիարեանը չը գործադրէ ամեն տեսակ միջոցներ՝ աղբիւր թէ Բ. Գրան վրա և թէ մայրաքաղաքի հայ-կաթօլիկների վրա։ Կուպէլեան, երբորը թեկնածուն, կարող է յոյս դնել Հռոմի աթոռի գործակցութեան վրա։

—«Kölnische Zeitung» լրագրի ասելով, գեներալ Ջիլետտա, որին բանտարկութեան էր ենթարկել Փրանսիական կառավարութիւնը լրտեսութեան համար, ազատութիւն ստացաւ իտալական կառավարութեան յամառ պահանջների նկատմամբ։ Վերջինս, ասում է լրագրիչը, սպառնում էր հակառակ դէպքում մերկայանել այն փաստը, որ 1889 թ.ին Հռոմի Փրանսիական դեսպանը գողացել է, ուրիշի միջոցով, իտալական զինուորական մինիստրութիւնից Ջիլետտայի երկու հաշիւը, որը նա կազմել էր ծովափեայ Ալպերից վերադառնալուց յետոյ։

—Բուլղարիկներն հանրապետական կուրք հետեւեալ համակրական ուղերձն է ուղարկել Դէմաճի անունով, որ յանձնէ Կրէյֆուսին, «Ողորմած պարոն կապիտան Արքիէր Կրէյֆուս։ Այն քաղաքի, երբ արդէն հեռու չէ ձեր պատուով վերականգնեցնելու քաղաք, երբ վերջանում են ձեր ֆիզիկական և բարոյական տանջանքները, որոնց զուր տարաք այդպիսի քաջութեամբ և տոկոսութեամբ, ամենք Բուլղարիկներն կուրք անդամներս՝ չենք կարող չը յայտնել ձեզ մեր զարմանքը, հիացմունքը և խորին համակրութիւնը։»

—Միջոցող դատարանի կազմակերպութեան վերաբերմամբ հետեւեալ ծրագրին է կազմված Հազարայի կոմիտէի ծրագրով. —«Միջոցողային տարածաշրջանները լուծելու համար միջոցող դատարանին անմիջական զիմուր հնչեցանք։

Լու. նպատակով, պետութիւնները պարտաւորվում են հիմնել միջոցող դատարանի մշտական ատենա՝ մատչելի ամեն ժամանակ։ Այդ ատենաը ձեռնհաս կը լինի միջոցող դատարանի բոլոր դէպքերի համար, եթէ միայն վիճող կողմերը համաձայնութիւն չը կայացնեն յատուկ դատարան կազմելու համար։ Հազարայում կը հիմնվի մշտական ընդհանուր ատենադարձի գեկավարութեան ներքոյ գտնվող մի միջազգային բուրձ, որ կը ծառայի իբրև դիւանատուն ատենաի և իբրև միջոցող ատենաի գումարման վերաբերեալ հաղորդակցութիւնների մէջ։ Պետութիւններից իւրաքանչիւրը նշանակում է ոչ աւելի քան չորս մարդ, հսկող միջազգային օրէնդրութեան, բարոյապէս անարատ և համաձայն ստանձնելու միջոցող դատարանի կոչում։ Այդ անձինք համարվում են անդամներ ատենաի։ Ատենաը նիստերը կայացւում է Հազարայում կամ մի ուրիշ տեղ՝ ըստ ցանկութեան կողմերի։ Ամեն մի պետութիւն, նոյն իսկ այնպիսիներից, որոնք չեն ստորագրել ներկայ դաշինքը, կարող է դիմել այդ ատենաին։ Պետութիւնները իրանց պարտականութիւնն են համարում ամեն անգամ, երբ սուր ընդհարման վտանգ լինի նրանցից երկուսի կամ մի քանիսի մէջ, յիշեցնել վերջիններին, որ ատենաը բայց է նրանց համար։ Որքան հնար է կարճ ժամանակում կը հիմնվի մշտական խորհրդարան, կազմված պետութիւնների Հազարայում ունեցած ներկայացուցիչներից և Հոլլանդիայի արտաքին գործերի մինիստրից, որ կը լինի խորհրդարանի նախագահը։ Այդ խորհրդարանին կը շնչանով կազմակերպել միջազգային բուրձ, որ այնուհետև կը գործի խորհրդարանի գեկավարութեան և հեկոլեթեան ներքոյ։

—«Echo de Paris» հաղորդում է, թէ կարող է պատահել, որ Իրէյֆուսի նորոգված դատարանով ոչ թէ յուլիսի 29-ին, այլ օգոստոսի 6-ին։ Դատար կը տեղի մօտ երեք շաբաթ, ուստի դժուար թէ դատավճիռը կայանայ նախ քան օգոստոսի 20-ը։ Վճարեկ դատարանի քրէական ատենան առաջ ցուցմունք տուած բոլոր վկաները ցուցմունք կը տան զինուորական դատարանում բաց դռներով։ Կանչված վկաների թիւը 175 է, բայց դեռ մեղադրեալի պաշտպանն էլ կարող է վկաներ կանչել մինչև դատի օրը։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

1901 թ.ի ապրիլի 1-ին, հանդուցեալ իշխան Բիւսարի ծննդեան օրը, մտաւորութիւն կայ բանալ իշխան Բիւսարիի հոյակապ արձանը Բերլինում։ Արձանը նախագծել և պատրաստել է գերմանացի յայտնի քանդակագործ Բէյնզօլը-Բէլլան, որը արձան քանդակելու համար ստացել է հինգ հարկի հազար մարկ։ Ամբողջ արձանի բարձրութիւնը 7 սաճն է, որի մէկ կէսը գրանիտէ պատուանդանն է, իսկ երկրորդ կէսը կաթումբ է մեծ գերմանացի արձանը։ Բիւսարիի ներկայացված է իր սիրելի զինուորական համազգեստով։ Նրա ոտքերի մօտ, գրաւիտէ հիմքի մէկ կողմից, դեռնակում է իմաստուն Սիլվիան, որը ազատ կերպով նստել է խորհրդաւոր օֆիսիկի մէջը։ Իր մէջ բաց արած զրբը ձեռքում. նրա աչքերը ուղղված են նրան միայն հասկանալի տողերի վրա. միւս կողմից կանխած է աւանդական մէկ ծուխով չորած Ատլանը, որ իր հերոսական ուսերի վրա կրում է երկրագունդը։ Արձանի ընդհանուր տպաւորութիւնը շատ մեծ է։ Արձանը կը դրվի նոր պարլամենտի շինութեան առաջ։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒԳ. Տէրէկի շրջանի կառավարիչ զենեքալ-լեյտենանտ Կալանով արձակված է իր պաշտօնից, նշանակվելով Փուրքաստանի բանակի զորաբանին հրամանատար։

Թաղաւոր Կայսրը հրամայեց յուլիսի 12-ին, Թագածառանգ Յեսարեվիչի նշխարը բերելու օրը, տխուր հանդիսին մասնակցողներին ժողովել կէսօրից յետոյ, ժամի 5-ին, Նիկոլանովան երկաթուղու կայարանը, հանդիսին չը մասնակցողներին—6½ ժամին Պետրոպոլսկոյի տաճարը։

ԿԱՏԱՐՈ. Ժամանեց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ, որին զինուորեցին զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները և ապա մեկնեց դէպի Ցետինի։

ՑԵՏԻՆԻ. Ժամանեց Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ և ընդունվեց հանդիսաւոր կերպով։

ՊԱՐԻՉ. Գեներալ Գոնդ բողոքում է Էտտէր-հալի պատմութեան դէմ, որ վերաբերում է Բուլղարիկին և իրան։ Գոնդի բարեկամը, մի խմբագրի հարցին, պատասխանել է, որ այդ բողոքը կեղտոտ գործերը սաքել են Պատիդը-Կլամ և Անդի, առանց իրանց դիտութեան։

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՊ. Այսօր, երեկոյան 9 ժամին մօտ, Եկատերինոպոլսի անցաւ Կայսրական գնացքը Օգոստոսի Լիտանիքով, իսկ մի ժամից յետոյ—սղաւոր գնացքը Թագածառանգ Յեսարեվիչի նշխարով։ Կայսրանը զարդարված էր

է։ Դիմաւորեցին հոգեւորականութիւնը, զինուորական և քաղաքացիական պաշտօնեաները և քաղաքի ժողովուրդը։

ՐՕՏՕԳ ԳՈՆԻ ՎՐԱ. Ցուլիսի 10-ին, առաւօտեան 6½ ժամին, Նոօօրօսիսկից Բոստօլի վրայով անցան՝ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդօրովնա, Թագածառանգ Յեսարեվիչը, Մեծ Իշխաններ՝ Ալեքսէյ Ալեքսանդրովիչ, Նիկոլայ Միխայլովիչ, Մեծ Իշխանուհի Կէրիս Ալեքսանդրովնա և Մեծ Իշխանուհի Օդէա Ալեքսանդրովնա, ի Տէր հանդուցեալ Թագածառանգ Յեսարեվիչի նշխարը ետևից։ Գնացքին ուղեկցում է հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։

ՆՕՎՕԶԵՐԿԱՍԿ. Այսօր, առաւօտեան 8 ժամ 40 րոպէին, հասաւ սղաւոր գնացքը Թագածառանգ Յեսարեվիչ Դէօրգի Ալեքսանդրովիչի նշխարով։ Կայսրանի պատճառով վրա արբեկիսկոպոս Աֆանասի հոգեհանգիստ կատարեց։ Թագուհի Կայսրուհին աղօթք էր անում վազոնի մէջ հանդուցեալ Թագածառանգի դազգի մօտ։ Հոգեհանգիստից յետոյ թոյլ արովեց երկրպագել Յեսարեվիչի նշխարին հոգեհանգիստին ներկայ գտնվողներին և ժողովրդին։ Յեսարեվիչի դազաւի վրա բազմաթիւ պահներ գրվեցին, որոնց թիւում Դօնի չըջանի զօրքի կողմից, աղուտականներից և շրջանի բազմաքանից, Մարիինսկայա ինստիտուտից և ուրիշներից։

Կ. ՊՕԼԻՍ. Ռուսաց գնդապետ Ծոտակ յուլիսի 12-ին (24-ին) վարչութիւնը կը յանձնի Կրետէի իշխանութեան ձեռքը, և յուսաց լիազատի ցանկութեամբ, կը գնայ Աթէնք՝ լիազատի ներկայանալու համար։

ՑԵՏԻՆԻ. Իշխան Միլոի բազմաթիւ սվիտաւոր ճանապարհ ընկաւ մինչև սահմանը Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչին դիմաւորելու։ Երէկ ի պատիւ Մեծ Իշխանի տեղի ունեցաւ պալատում մեծ ճաշ։ Մեծ Իշխանը իջաւ իշխան Միլոի պալատում։ Ամբողջ քաղաքը զարդարված է դրօշակներով։ Հասարակութիւնը մեծ ցոյցեր արաւ Մեծ Իշխանին։ Իշխան Նիկոլայ ու Մեծ Իշխանը համարվեցին երեք անգամ։

ՊԱՐԻՉ. Լուրէ ուղարկւած է կապիտան Լէգրանին Պետերբուրգ՝ պակս դնելու Յեսարեվիչի դազգի վրա։

ԼՕՆԴՈՆ. Պէկինից հեռագրում են յուլիսի 21-ից «Times» լրագրին, որ այնտեղ բացվել է ռուսաց ռուսամարան, որտեղ պէտք է աւանդվեն աւանանապէս ռուսաց լեզու և ռուսաց լեզու լիճացող շինանքներին պատրաստեն երկաթուղու ծառայողները։ Ռուսացիները նշանակված են ռուսներ։ Ռուսամարանը, որ բացվեց երէկ, չինաց կառավարութեան հաշուով է պահպանվում։

11 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒԳ. Թագաւոր Կայսրը յուլիսի 11-ին զիշերը մեկնեց Պետերբուրգի զինուորական Տէր հանդուցեալ Թագածառանգ Յեսարեվիչի նըշխարին։

Լուսաւորութեան մինիստրի շրջաբերականը ուսումնարանական շրջաններին հոգաբարձուներին. «Ի կատարումն Բարձրագոյն կամըր, ես, խորհրդակցելով ռուսամարանական շրջաններին հոգաբարձուների և բարձրագոյն զարդարների կողմից ինչեքի հետ, հնարաւոր համարեցի զիշերութիւններ անել ներկայ տարում անկարգութիւններին բոլոր մասնակցողներին, բայց մի քանիսն իրանց, որոնց բարձրագոյն զարդարներում մնալը կարող է վնասակար համարվել և որոնք այդ պատճառով չեն ընդունվի ոչ մի բարձրագոյն զարդարի իսկ բոլոր մնացածները, որոնք արձակված են բարձրագոյն զարդարներից, կը բաժանվեն երկու մասի 1) նրանք, որոնք կարող են ընդունվել նորից միևնոյն զարդար ներկայ տարով օգոստոս ամսին, եթէ բարձրագոյն զարդարների տեղի պահպանութեան կամ մի որ և է ուրիշ հանդամանքների պատճառով այդ կարգի բոլոր ուսանողները չը կարողանան ռուսանդների թիւում ընդունվել, այն ժամանակ կարելի է նրանց թոյլ տալ ռուսանդ հաշիւ եկող տարով յուլիսի 1-ից, կամ թոյլ տալ ընտելութիւն տալ 1900 թ. լի մայիսին, ընտելութիւն յետոյ ռուսանդների թիւում հաշուելով նրանց։ 2) նրանք, որոնք կընդունվեն մի և նոյն զարդար 1900 թ. օգոստոսին. սրանց թիւում հաշուել են և նրանք, որոնք անկարգութիւններին ժամանակ արձակված են եղել զարդարից, առանց իրաւունք ունենալու մտնել որ և է ուրիշ զարդար, եթէ ժողոված տեղեկութիւններից կը յայտնվի, որ նրանք վատ ազդեցութիւն չեն ունենայ ընկերների վրա և ուսումնական պարագլուխներին կանոնաւոր ընթացքի վրա։ Կարգերը բաժանելու իրաւունքը ես թողնում ձեր դերականացութեան հայեցողութեան, խորհրդակցելով ռուսամարանական իշխանութեան և տեղա-

կան աղմկոտություններն են: Նրանք ամեն-
քեզ, որոնք ցանկանում են ընդունվել, պար-
տաւոր են խնդրել տալ այն դպրոցին, որտեղից
արձակված են եղել և այդպիսինքն յայտնել,
որ եթէ միւս անգամ մասնակցեն այդպիսի ան-
կարգութիւններին, կարձակվեն, առանց իրա-
ւունք ունենալու մտնել մի որ և է ուրիշ դպրոց:
ՄՈՍԿՎԱ. Ցեսարեվիչի մարմինը հանգստոց-
ներու տեղերում, իրազան, Լիբերցի, Կուսկով-
սեւաւորված էին. Կուսկովում կառուցված էր
կամար: Սգաւոր գնացքը սպասում է Պեր-
վում, Կազանի երկաթուղու ճանապարհի վրա,
կիրակի: Մէկ րօպէ կանգ առնելուց յետոյ՝ դը-
նացքը կը յանձնվի Կուսկով: Երեք րօպէ կանգ
առնելուց յետոյ գնացքը կը մեկնի դէպի Մոսկ-
վա: Հոգեհանգիստ կատարելուց յետոյ գնացքը
կուղևորվի Պետերբուրգ:

ՄԻԼԼԵՐՈՎՈ. Նովոքրակսկից սկսած՝ ճանա-
պարհին կանգնած էին իւրաքանչիւր հինգ-
տասը ըսյի վրա ձիաւոր և հետևակ կազակ-
ներ: Սրտաճմրկ տեսարան էր ներկայացնում
սգաւոր գնացքի անցնելը դաշտով: Կազակները
դադարեցնում էին իրանց դաշտային աշխատան-
քը, չընդունէին ծնկան վրա և ծուրը դնում,
մնաւ բարև ասում իրանց սիրեցեալ թագաժա-
ռանդ Ցեսարեվիչի, իրանց Ատամանի նշխար-
ներ: Կայարաններում և մերձակայ գիւղե-
րում ժողովվել էր ամբողջ ազգաբնակչու-
թիւնը հոգեհանգիստի հետ և աշա-
կերաններ իրանց ուսուցիչներով՝ ճանապարհ
գցելու նշխարը և մնաւ բարև ասելու նը-
րան: Երբեք հայտնա յայարանում սգաւոր դը-
նացքը կանգ առաւ: Վեց լատիններ, չըը-
ջակայ գիւղերից, հոգեհանգիստ կատարեցին
Ցեսարեվիչի դագաղի վրա, որից յետոյ կազակ-
ները երկազեցին հանգուցեալի աճիւնին: Սը-
գաւոր գնացքը գալու միջոցին կայարանում
էին գտնվում Դոնցիկի շրջանի ատաման զըն-
դապետ Կուշնարեվ, Կամենսկայա ստանիցայի
ատաման Պոչինսկի և Յէ ուրիշ ատամաններ:
Բոլոր ատամանները բռնած ունէին իրանց
ձեռքերում ատամանեան նշանները—գաւազան-
ներ: Գնացքի գնալուց առաջ, կազակները աղչի-
կներ և սողաններ դագաղի վրա ծաղիկներ ցա-
նեցին:

ԿՈՂԼՈՎ. Գիշերվայ ժամի 1-ին լիսին՝ կա-
յարանը հասաւ սգաւոր գնացքը թագաժա-
ռանդ Ցեսարեվիչի նշխարով: Գնացքը գալու
միջոցին կայարանում կանգնած էին զօրքեր գե-
ներալ Գանի առաջնորդութեամբ: Երբ վագօնը
բայկեց, հերթապահութեան համար կանգնեցին
օֆիցերները և զինուորները: Հոգեհանգիստի լի-
նը հոգեհանգիստ կատարեց: Հոգեհանգստից յե-
տոյ գնեցեալ Գանի օֆիցերները հետ շքեղ պսակ
դրեցին: Բազմութիւնը մինչև գնացքի գնալը
երկազեցում էր նշխարներին: Գիշերվայ երեք ժա-
մին սգաւոր գնացքը արդէն «Մասլովկա» կայա-
րանում էր, որտեղ արտակարգ գնացքով եկել
էին Վ. օրօնէժից՝ արքեպիսկոպոս Անաստասի,
փոխ-հաւանդապետը, զինուորական ինքնաու-
թիւնները, ազնուականութեան պարագլուխները,
գեներալի զինուորները, քաղաքագլուխը, վա-
ճառականները ներկայացուցիչը, և շատ անուա-
նի կալուածատէրեր: Կայարանը, չը նայած գե-
ներալ ժամանակին, լիքն էր բազմութեամբ,
որը սպասում էր թագաժառանգ Ցեսա-
րեվիչի նշխարը գալուն: Արդէն լուսա-
նում էր, երբ արքեպիսկոպոս Անաս-
տասի ժողովված հոգեհանգիստ կատարել: Դագաղի մօտ
սկսեց հոգեհանգիստ կատարել: Դագաղի մօտ
հերթապահ կանգնեցին տեղական զօրքի օֆի-
ցերները և զինուորները: Շուտով, գիշերվայ
լուսութեան մէջ տարածվեց «ВЪ ЧИНА ПАМЯТЬ» թաղ-
ման երգի ձայնը: Տիրեց հանդիսաւոր րօպէն:
Ամենը, իբրև մի մարդ, չըքցեցին, թափվեցին
արտասուքները: Գնացքի գնալուց առաջ արքե-
պիսկոպոս Անաստասի օրհնեց մարմինը, ա-
մենք երեսները խաչակնքեցին ու գնացքը
շարժվեց: Ժամի 7-ին գնացքը կանգ առաւ
Վերեալի կայարանում, որտեղ ժողովվել էր
բազմաթիւ ժողովուրդ: Հոգեհանգիստի լի-
նը դուրս էր եկել ընդառաջ և հոգեհանգիստ կա-
տարեց, որից յետոյ պսակներ դրին դագաղի
վրա:

ՆԻԿԻՏԻՆՈ. Կողովից մինչև Բեաժկ կանգ-
նած էր բազմաթիւ ժողովուրդ: Այդք էին ընկ-
նում գեղջկուհիները իրանց տեղական հագուս-
տով, կոյսերը և ուխտագնացները: Ամեն
տեղ, ուր կանգ էր առնում սգաւոր գնաց-
քը, ժողովուրդը երկազեցում էր նշխար-
ներ, առաւել «Բեաժկ» կայարանում, որտեղ
սպասում էին տեղական հոգեհանգիստի լի-
նը:

դէմտվոյ գլխաւորը, քաղաքագլուխը, պատուա-
ւոր ծերունի Ուշակով՝ ճանապարհների հետ: Եւ-
րիկներով դարձաւ կայարանում կանգնեց
Բեաժկի հրդեհաշէջները խումբը: Գնացքը հաս-
նելուց յետոյ, դագաղի մօտ հոգեհանգիստ կա-
տարվեց, որից յետոյ քաղաքագլուխը և հրդե-
հաշէջները գլխաւորը դագաղի վրա շքեղ
պսակներ դրեցին: Ապա թողաւ դագաղը ժո-
ղովրդին՝ երկազեցելու նշխարը: Վէստրին մօտ
սգաւոր գնացքը ճանապարհ ընկաւ Բեաժկ,
որ հոգեհանգիստ է նշանակված:

ՄՈՍԿՎԱ. Հոգեհանգստին ներկայ լինելու
համար գեներալ-հաւանդապետի կարգադրու-
թեան մէջ յայտարարված է, որ սգաւոր գնաց-
քը թագաժառանգի նշխարով կը գալ Նիկո-
լայեկայա ճանապարհին երկկողման 9 ժամին:
Թագաժառանգի դագաղի վրա պսակներ կը դրվեն
Բեաժկի նահանգի քաղաքագլուխը, վարչու-
թիւնից, Բեաժկի դուստրից, Բեաժկի դէմտու-
վոց, Կազանի երկաթուղու ընկերութիւնից,
Փօթի, Թիֆլիս, Բաթում և Բեաժկ քաղաք-
ներից:

12 յուլիսի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Թագաւոր Կայսրը դիմաւորեց
գնացքին հանգուցեալ թագաժառանգ Ցէսարե-
վիչի նշխարով յուլիսի 11-ին Կուսկովօ՝ կա-
յարանում, բարեհաճեց անցնել սգաւոր գնացքը
և Մոսկվա ճանապարհով թագուհի Կայսրուհի
Մարիա Ֆէօդորովնայի և Նոյս Բարձրութիւն-
ների հետ:

ԲԱՐՏԷԼՈՆԱ. Երէկ երկկողման, ֆրանսիական
ժողովուրդների պատին տրված տօնախմբու-
թիւններից յետոյ, լուրջ անկարգութիւններ տե-
ղի ունեցան: Յոյց անողները աղաղակում էին
Վեցցէ ազատ Կատալոնիան: Ոստիկանութիւնը
ստիպված էր սրբեր մերկացնել: Կարգը վերա-
կանգնված է:

ՊԱՐԻՋ. «Aurore» և «Matin» լրագիրները հա-
ւատացնում են, որ դատը Բէնեում կը սկսվի
օգոստոսի 7-ին նոր տոմարով և կը տևի 10 օր:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բարձրագոյն հաստատված է
Օգոստոսի 1-ին ընտանիքի Բարձրագոյն անուննե-
րի յիշատակութեան նոր ձեռ ժամանացութեան
ժամանակ, ի փոփոխումն յունիսի 30-ին հաս-
տատված ձևի:

«Ամենաբարեպաշտ, Ամենախնայալ, մեր
Մեծ Թագաւորի, համայն Ռուսաստանի Կայսր
Նիկոլայ Ալեքսանդրովիչի մասին. Նրա Ամուս-
նու, Ամենաբարեպաշտ թագուհի Կայսրուհի Ա-
լեքսանդրա Ֆէօդորովնայի մասին. Նրա Մօր,
Ամենաբարեպաշտ թագուհի Կայսրուհի Մարիա
Ֆէօդորովնայի մասին. Բարեպաշտ Թագաւոր
Թագաժառանգ և Մեծ Իշխան Միխայիլ Ալեք-
սանդրովիչի և ամբողջ Արքայական տան մասին»:
ՄՈՍԿՎԱ. Երկկողման 9 ժամին սգաւոր գնաց-
քի Կայսերական պալլիսին մօտենալու ժամա-
նակ, մայրաքաղաքների բոլոր զանազատնե-
րում սկսվեց խուրը զանազանութիւն մինչև
սգաւոր գնացքի Պետերբուրգ ճանապարհով:
Ցեսարեվիչի նշխարը հասնելու ժամին, մայրա-
քաղաքի բոլոր տաճարներում հոգեհանգիստներ
կատարվեցին:

ՄՈՍԿՎԱ. Կայսերական պալլիսինում տեղի
ունեցած հոգեհանգստին հաւաքվեցին բարձր
ինքնաութիւնները և պալատականները. ժամա-
նեց Մեծ Իշխան Սերգէյ Ալեքսանդրովիչ իր
ամուսնով: Երկկողման 9 ժամ 5 րօպէին մօտե-
ցաւ սգաւոր գնացքը, որի մէջ գտնվում էին
Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Մարիա
Ֆէօդորովնա, Թագաժառանգ և ուրիշ Բարձ-
րագոյն Անձինք: Գնացքի մօտենալու ժամանակ
պատուաւոր պահակախումբը զինուորական պա-
տիւ տուեց: Վագօն-սպորն մտաւ Մեծ Իշխան
Սերգէյ Ալեքսանդրովիչի և դուրս եկաւ Թագա-
ւոր Կայսրի հետ միասին: Թագաւորը բարեկեց
պատուաւոր պահակներին և Նորին Բարձրու-
թեան և Մեծ Իշխանուհի Նիխայիլա Ֆէօդ-
օրովնայի հետ կրկին մտաւ վագօնը: Վագօնը
Ցէսարեվիչի դագաղով բացված էր: Միտրօպո-
լիտը հոգեհանգիստ կատարեց: 10 ժամին սգա-
ւոր գնացքը ճանապարհ ընկաւ Պետերբուրգ:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒԶԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
ԽՈՒՆԱԿ ՄԵԼԻԻՔ-ԱՂԱՄԱԼԻԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄՈՍԿՎԱՅԻՆ ՀԻՄՆԻԿԱՆՈՑ
Բ. ՆԱՌԱՍԱՐԻԵԱՆԻ

(Կուկիւր, Վոսոցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

Ա Ռ Ա Ի Օ Տ Ն Ե Ր Ի
Բ. Ա. ՆԱՌԱՍԱՐԻԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վերականգն (սիֆիլիս) և միզառեւ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ.
Ջ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11—12 ժ. կանանց
հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և
երկալոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1 1/2—2 ժ. ներքին և միա-
նեական հ.

Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ի
Ն. Ն. ՌՈՍՏՈՒՄԵՎՈՎ—6 1/2—7 1/2 ժ. վերա-
բուժական հ.:
Բ. Ա. ՆԱՌԱՍԱՐԻԵԱՆ—7 1/2—8 ժ.
Տ. Ի. ԲՈՒԿԵՆՎՈ Տիւնայանցումը քիմիական
և խոչորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, խիստ, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համալսարնի
(կոմսիլիումի) և օպերայի համար առանձին:
Օ. Տ. ԱՌՎԱՆԻՏԱՎԻ—պարապում է տանը
ծաղկահատութեամբ, բժշկական մարմնամար-
դութեամբ և մարզելով. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերատեսուչ
4—150 Բժշկապետ ՆԱՌԱՍԱՐԻԵԱՆ

Ա. Յ. ԱՍՄԱՆ
„Ն Ո Ւ Ա. Գ Ն Ե Ր“
Կինն է 10 Կօպէկ
Կիմել Թիֆլիս՝ Կենսաբանական գրա-
վաճառանոցին և Թաւրիզ՝ Հեղինակին—
այսպէս. A. H. Asman. Tauris—Perse.
1—5

Տեղափոխվելով Թիֆլիսից Շուշի, բացել եմ
ԿԱՐ ՈՒ ՁԵՆԻ ԵՒ ՁԵՆԱՎՈՐՈՒ
ուսումնարան, որտեղ ընդունում եմ աշակեր-
տուհիներ սովորեցնելու համար: Նորիպէս ըն-
դունում եմ ամեն տեսակ պատուէրներ:
Բուլվարայա փողոց, տուն Ստեփան Արդու-
մանեանցի:
Տիֆլիս Սօփիա Հայրապ. Ղահրամանեանց
3—10

Չ գ ու չ ա ց է ք Կ ե դ ու մ ն ե ր ի ց
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԵԱՆ ՍԱՊՈՒՆ
Գ. Ֆ. Ի Ի Գ Ե Ն Ս
Ոչնչացնում է պեպիդները, սեւթիւնը, դե-
ղին բծերը, պոպիկները և պտուկները և
ներքործում է աւելորդ ըրտնելու դէմ: Խոյ-
հուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուա-
լէտային անուշահոտ սապօն, բարձր արժա-
նաւորութեան:
ՈՍԿԷ ՄԷԿԱԼ. 1893 թ-ի համար:
Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.:
Ծախվում է բոլոր ամենալաւ դեղագործա-
կան մագաղաններում և դեղատներում:
Իշխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի
համար Գ. Ֆ. Իւրգէնի մօտ Մոսկվայում:
Ռէպօ, Թիֆլիսում, Ապստոլի մօտ, դեղա-
գործական ապրանքների առևտրի կովկասեան,
ընկերութեան մէջ, Մուրիսովի և Գրիվնակի,
պ.պ. Պապովների և Արիստակովի մօտ:
(13, 27) 9—24

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Նագօրնայա փողոց, № 9)
Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած
աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնդիր, Ս. Մանուէլեան-
ցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնա-
րանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ:
ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍԿԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Կուրսերի ծրագրերը և կանօնները կարելի է ստանալ ձրի աղէս եղը. Ծովանօվների բան-
կային գրասենեակում և կուրսեր հիմնդիր բնակարանում: Օտարաքաղաքացիները դիմում են՝
ТИФЛИС, упрединю коммерческих курсов С. П. Мануэляна. (Կ) 4—12

HUILE d'OLIVE BESSEDE
Իսկական պրօվանսայի իւղ ԲԵՍԵԴԵ, բոլորովին մաքուր, առողջ և ամենալաւ
տեսակից: Խնդրում են չընդունել այնպիսի շիշեր, որոնց զրոյմները վնասված են կամ
չունեն ստորագրութիւն: Զգուշ կենալ կեղծումից, որոնք աշխատում են նմանացնել
զրոյմը կամ շիշի ձևը: Իսկական ԲԵՍԵԴԵ իւղը, Մարսէլայից (Ֆրանսիա) վաճառվում
է ամեն տեղ:

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
Կանօնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլս: Մեկնում է Բաթում-
մից՝ չորեքշաբթի, 21 յուլիսի (2 օգոստոսի) ԱՆԱՏՈԼԻ չորեքշաբթի, նաւագետ ԲԱՆԿԻ: Եւ այսպէս
շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարսկ ուղղակի հաղորդակցութեան տոնախմբի տրվում են սովորական ից
պակաս գնեցով:
Ամիւր մի անգամ կանօնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունե-
լով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակաւարներին:
ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր դ'Արսօն, Նաբէլէժնայա: ԹիֆլիսԻՄ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիմի փող. Խօջափարուկովի և Մայրուրաձէի բարձրաստար: ԲԱԹՈՒ—եղը. Վ. և Ի. Մուլա-
ֆեաններին, Նաբերեժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՈՐՈՍԻԹՍԿ—պ. Մեխիօր
(Կ. հ. չ.) 17—20

ԿԵՕԼԵՐԻԱՆ ՔԱՅԱԽԻ ԷՍԷՆՑԻԱ
ՄԱԽՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՒ ՅԱՅՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՄՕՏ
Շ ն ո ր չ ի ւ
ԿԵՕԼԵՐԻԱՆ ԳԵՅՑԵԽԻ ԷՍԷՆՑԻԱՆԵՑԻ
յ ա յ տ ն ի լ աւ յ ա տ կ ու թ ե ա ն
և նրա անկասկած առաւելութեան ուրիշներ համեմատութեամբ, նրա վաճառքը այնքան է
աճել, որ անցեալ տարի հասել է
ՄԷԿ ՄԵԼՈՒՆԵՑ ԱՌԵԼ ՄՐՈՒԱԿԻ
Էժան գներով ուրիշներն էլ են առաջարկում, բայց ոչ թէ նրա համար, որ մեծ քանակու-
թեամբ են ծախում, և այդ պատճառով էլ բնականապէս պակասացնում են ապրանքի ար-
ժեքը, այլ մի այն ստիպված լինելով մրցել, չուր են խառնում և պակասացնում են էսէն-
ցիայի բաղադրիչ նիւթը: